ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵ

ՀՐԱՄԱՆ

Հմ. 22-Լ 04 հունիսի 2019թ.

ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել՝

1. Լեզվի կոմիտեի լեզվական վերահսկողության բաժնի կանոնադրությունը՝ ըստ 1-ին հավելվածի.
2. Լեզվի կոմիտեի վարչական իրավախախտումների բաժնի կանոնադրությունը՝ ըստ 2-րդ հավելվածի:

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Հավելված 2

Լեզվի կոմիտեի նախագահի

2019 թվականի հունիսի 4- ի հմ. 22–Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Լեզվի կոմիտեի վարչական իրավախախտումների բաժինը *(այսուհետ՝ բաժին)* Լեզվի կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հայերենի կիրառությունը կարգավորող այլ օրենքներով, Լեզվի կոմիտեի նախագահի հրամաններով, Լեզվի կոմիտեի և բաժնի կանոնադրություններով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

3. Բաժնի կանոնադրությունը հաստատում է Լեզվի կոմիտեի նախագահը:

II. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Բաժնի նպատակներն ու խնդիրներն են՝

1) «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարման և հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում պետական լեզվի գործառության ապահովումը.

2) «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը.

3) լեզվական օրենսդրության խախտումների դեպքում օրենքով սահմանված կարգով պատասխանատվության միջոցների կիրառման ապահովումը.

4) լեզվի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական շահը պաշտպանելը և Հայաստանի Հանրապետության դատական ատյաններում Լեզվի կոմիտեի մասնակցության ապահովումը.

5) «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ Լեզվի կոմիտեի գործերով դատական ակտերի կատարումն ապահովելը.

6) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական լեզվական քաղաքականության իրականացմանն աջակցելը.

7) լեզվի բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի մշակումը:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժինն իր նպատակների ու խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքում և կարգով՝

1) վերահսկում է *(ստուգում, ուսումնասիրություն, մշտադիտարկում, օրենքով նախատեսված կանխարգելիչ այլ գործառույթներ)*՝

ա. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական լեզվական քաղաքականության իրականացումը.

բ. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենը լինելու պահանջի կատարումը.

գ. Հայաստանի Հանրապետության բոլոր միջնակարգ-մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի մուտքի քննությունը և հայոց լեզվի ուսուցումը պարտադիր լինելու պահանջի կատարումը.

դ. պաշտոնատար անձանց և սպասարկման առանձին ոլորտներում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների գրական հայերենին տիրապետելու պահանջի կատարումը.

ե. Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող անձանց պաշտոնական ելույթների լեզուն օրենքով նախատեսված դեպքում գրական հայերենը լինելու պահանջի կատարումը.

զ. համագումարներում, նստաշրջաններում, ժողովներում, գիտաժողովներում, հրապարակային ատենախոսությունների և պաշտոնական ու հանրային միջոցառումների,

հեռուստառադիոհաղորդումների ժամանակ ոչ հայերեն ելույթների զուգահեռ հայերեն թարգմանությունը ապահովելու պահանջի կատարումը.

է. Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների գործավարությունը գրական հայերենով կատարելու պահանջի կատարումը.

ը. Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշերը, նամականիշերը, կնիքները, միջազգային փոստային ծրարները հայերեն ձևավորելու պահանջի կատարումը.

թ. գովազդի բոլոր միջոցները հայերեն ձևավորելու պահանջի կատարումը.

ժ. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող արտասահմանյան պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների՝ պետական վերահսկողության ենթակա փաստաթղթերը հայերենով զուգակցելու պահանջի կատարումը.

2) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքին համապատասխան՝ պատասխանատվության միջոցներ կիրառելու համար նախապատրաստում և դատարան է ներկայացնում լեզվական օրենսդրության խախտումների վերաբերյալ նյութերը.

3) կազմում է հայցադիմումներ, վերաքննիչ ու վճռաբեկ բողոքներ, ինչպես նաև դատավարական այլ փաստաթղթեր.

4) պետական շահը պաշտպանելու նպատակով Հայաստանի Հանրապետության դատական ատյաններում հանդես է գալիս որպես Լեզվի կոմիտեի ներկայացուցիչ.

5) «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ ապահովում է Լեզվի կոմիտեի գործերով դատական ակտերի կատարումը.

6) աջակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական լեզվական քաղաքականության իրականացմանը.

7) մասնակցում է՝

ա. լեզվական քաղաքականության պետական ծրագրի մշակմանը և դրա իրականացմանը,

բ. լեզվական քաղաքականությանը վերաբերող հարցերին նվիրված խորհրդակցությունների, համաժողովների ու այլ միջոցառումների կազմակերպմանը.

գ. Լեզվի կոմիտեում անցկացվող, ինչպես նաև Լեզվի կոմիտեի գործունեությանն առնչվող խորհրդակցություններին, քննարկումներին, պաշտոնական և աշխատանքային այլ միջոցառումներին.

8) մշակում է լեզվի բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի, ինչպես նաև Լեզվի կոմիտեի և բաժնի գործառույթներին առնչվող իրավական ակտերի նախագծեր և ուղեցույցներ, ներկայացնում առաջարկություններ, կազմում եզրակացություններ և այլ փաստաթղթեր, դրանց վերաբերյալ տալիս հիմնավորումներ, պարզաբանումներ.

9) իր լիազորությունների շրջանակում կատարում է քաղաքացիների ընդունելություն, քննարկում նրանց դիմումները, բողոքները, առաջարկությունները, կազմում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների ու կազմակերպությունների, քաղաքացիների դիմումների և այլ գրությունների պատասխանների, ինչպես նաև նրանց հասցեագրված դիմումների և այլ գրությունների նախագծերը.

10) պարբերաբար ներկայացնում է լեզվական օրենսդրության պարզաբանումների վերաբերյալ խորհրդատվական բնույթի նյութեր.

11) համագործակցում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, մշակութային կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների հետ.

12) Լեզվի կոմիտեի և բաժնի գործառույթներից բխող աշխատանքի վերաբերյալ նյութեր է ներկայացնում Լեզվի կոմիտեի կայքի պատասխանատուին.

13) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ գործառույթներ:

IV. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Բաժնի գործունեությունը համակարգում և վերահսկում է Լեզվի կոմիտեի նախագահը:

7. Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է բաժնի պետը:

8. Բաժնի պետը և բաժնի մասնագետները քաղաքացիական ծառայողներ են:

9. Բաժնի պետի և բաժնի քաղաքացիական ծառայողների պաշտոնի դիրքը համապատասխան մարմնում, պաշտոնի գործառույթները, իրավունքները և պարտականությունները, աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը, որոշումներ կայացնելու, գործունեության ազդեցության լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց

լուծման շրջանակը, կրթությունը, աշխատանքային ստաժը և (կամ) աշխատանքի բնագավառում փորձը, ընտրանքային կոմպետենցիաները (գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարքագծի ամբողջություն) սահմանվում են նրանց քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: